Գործ ԵԴ2/0589/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

30.01.2024թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «Լուսի-Արեգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի Հայկական բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2023 թ. թիվ 2 արձանագրությունով՝ Սոլիդ-Քոնսթրաքշն ՍՊԸ-ի և Թիամատ ՍՊԸ-ի/կոնսորցիում/ ու ՌԱՖՖ Գրուպ ՍՊԸ-ի և ՍԻՄԱ-Շին ՍՊԸ-ի/կոնսորցիում/ հայտերը բավարար գնահատելու և ՌԱՖՖ Գրուպ ՍՊԸ-ին և ՍԻՄԱ-ՇԻՆ ՍՊԸ-ին/կոնսորցիում/ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «Լուսի-Արեգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից 25.01.2024թ.-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի Հայկական բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2023 թ. թիվ 2 արձանագրությունով՝ Սոլիդ-Քոնսթրաքշն ՍՊԸ-ի և Թիամատ ՍՊԸ-ի/կոնսորցիում/ ու ՌԱՖՖ Գրուպ ՍՊԸ-ի և ՍԻՄԱ-Շին ՍՊԸ-ի/կոնսորցիում/ հայտերը բավարար գնահատելու և ՌԱՖՖ Գրուպ ՍՊԸ-ին և ՍԻՄԱ-ՇԻՆ ՍՊԸ-ին/կոնսորցիում/ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին

Հայցադիմումը 25.01.2024թ-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 26.01.2024թ-ին:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԷԴ. ԱՄԱԼՅԱՆ**